և Ռուս Օրթոդոքս Եկեղեցիին կողմէ՝ հայր Պավել։

Բոլորին պատասխանած է Վազգէն սրբազան։ Ռումաններէն լեզուով ան շնորհակալութիւն հայտնած է նախ կառավարութեան և հետո պատրիարքին, որու ներկայացուցիչն խնդրած է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին ողջոյնները հաղորդել Ռումանիո պատրիարքին։ Ապա հայերէն լեզուով շարունակելով իր խոսքերը, հաղորդած է նորին Ս. Օծութեան օրհնութիւնները։

Հայ մշակույթի սրահին մեջ ալ տեղի ունեցած է ընդունելութիւն մը սրբազանին վերադարձին առթիվ։

ՀԱՅԵՐԸ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՄԵՋ

Կալկաթայի մեջ լույս տեսնող «Նոր Ազդարար» պարբերաթերթին մեջ Միրզայան Ա. քահանա Հնդկաստանի, Պիրմաստանի և Ճավայի հայոց 1950 թվականի ընդհանուր վիճակագրությունը հրատարակած է, զոր կուտանք ստորև իր շահեկանության համար.

Կալկաթա ունի 200 տուն հայ 915 բնակչությամբ, 506-ը այր և 409-ը կին, 3 եկեղեցի, 2 քահանա և 2 դպրոց։

Սուրաբայա ունի 145 տուն հայ 630 բնակչությամբ, 383-ը այր և 247-ը կին, 2 եկեղեցի, 1 քահանա և 1 դպրոց։

Ասանսոլ՝ 39 տուն 102 բնակչությամբ, 54-ը այր և 48-ը կին, առանց եկեղեցիի, առանց քահանայի և առանց դպրոցի։

Բոմբեյ՝ 25 տուն, 53 բնակիչ, 31-ը այր և 22-ը կին, 1 եկեղեցի, 1 քահանա, առանց դպրոցի։

Մադրաս՝ 8 տուն, 32 բնակիչ, 15-ը այր և 17-ը կին, նույնպես։

Դակկա՝ 43 տուն, 75 բնակիչ, 53-ը այր և 22-ը կին, նույնպես։

Ռանգուն՝ 54 տուն, 138 բնակիչ, 72-ը այր և 66-ը կին, 2 եկեղեցի, առանց քահանայի և դպրոցի։

Սինգապուր՝ 6 տուն, 22 բնակիչ, 12-ը այր և 10-ը կին, 1 եկեղեցի, առանց քահանայի և դպրոցի։

Համագումար՝ 520 տուն, 1.967 բնակիչ, 1126-ը այր և 841-ը կին, 11 եկեղեցի, 6 քահանա և 3 դպրոց։

ՎՐԱՑԵՐԵՆ ԵՎ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐ ՍԻՆԱՅԻ ԱՆԱՊԱՏՈՒՄ

Gérard Garitte անունով մի Բելգիացի երիտասարդ արևելագետ, որը մասնակցել է Սինայի անապատի էքսպեդիցիային, Louvain-ի համալսարանի պաշտոնագրի մեջ («Le Muséon», revue d'études orientales), հատոր XIII, 1950 թ., էջ 119—121), հետևյալ ուշագրավ տեղեկությունն է տեղավորել Սինայի վանքում պահվող ձեռագրերի մասին.

Սինայի վանքն ունի 3.300 ձեռագրեր, որոնցից 2.289-ը՝ հունարեն է, 520-ը՝ արաբերեն՝ 276-ը՝ ասորերեն, 41-ը՝ սլավոներեն, 6-ը՝ եթովպերեն, 98-ը՝ վրացերեն (որոնցից 8-ը անհետացել են) և № 87-ը, մեկ ձեռագիր՝ հայերեն։

Այս տեղեկությունը վրացագետ և հայագետ մեր գիտնականների ուշադրությանն ենք ներկայացնում։